ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«12» 12 2025 թ.
№ ԿԵՆՍԱԲԱՆ/2218

«ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00022766/
ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 198 Ա
էլ. փոստի հասցե՝ dasocprint@gmail.com
Հեռ.՝ +374 33 33 93 96

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի միջև 28.02.2025թ. կնքված N ԳՀԾՁԲ-25-8/6-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 27.05.2025թ. կնքված թիվ 1 համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն ի թիվս ծառայության արդյունքում մատակարարվելիք այլ ապրանքների պետք է մատակարարեր նաև 100 հատ «Զորահավաքային միջոցառումների հաշվառման մատյան», 62 հատ «Ապարատային մատյան հեռագրային կապի կայանի Ձև 27/Կապ», 71 հատ «ՄՊ մարտական հերթափոխի վերահսկման մատյան», 77 հատ «Հույժ գաղտնի և գաղտնի հեռագրերի հաշվառման մատյան Ձև 28/Կապ», 1500 հատ «Օրացույց սեղանի», որոնք ամբողջությամբ չեն մատակարարվել, ինչպես նաև մատակարարման ենթակա ՝ 2000 հատ «Վաշտի հիվանդների գրանցման մատյան»-ից չի մատակարարել 50 հատը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.12.2025թ.-ին միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը և կից համաձայնագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 20 011 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 5.3 կետի համաձայն) և 3 930 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 03.11.2025թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 85 480 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 128 220 ՀՀ դրամ, որն

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2025թ. դեկտեմբերի 22-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 85 480 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 128 220 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԴԱՍՈ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. դեկտեմբերի 22-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ